ՀՏԴ: 792(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-283

ԱՐԴԻ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՍԿՈՒՐՍԸ

2022 թ. հոկտեմբերի 6-7-ը Երևանում տեղի ունեցավ «Արդի հայ թատրոն. նոր միտումներ և հիմնախնդիրներ (1990-2022)» միջազգային գիտական նստաշրջանը, որը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, Վարշավայի համալսարանի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի թատրոնի և դրամայի հետազոտությունների կենտրոնը, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտը: Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատողները, դասախոսներ ԵԹԿՊԻ-ից, Ռուս-հայկական սլավոնական համալսարանից, ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղից, ինչպես նաև Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանից, ինչպես նաև բանախոսներ Վարշավայից, Մոսկվայից, Փարիզից և Լիոնից: Նստաշրջանի մասնակից թատերագետների, արվեստաբանների, երաժշտագետների, թանգարանագետների, բեմադրիչների, բանասերների և գրականագետների ուսումնասիրությունների կենտրոնում արդի հայ թատրոնի և դրամատուրգիայի նոր միտումներն ու հիմնահարցերն էին:

Նստաշրջանն աչքի ընկավ առանձնակի հանդիսավորությամբ: Մեծ էր հետաքրքրությունը թե՛ գիտաշխատողների, թե՛ հանդիսատեսի կողմից, ինչը վկայում է այն մասին, որ արդի թատրոնի մասին խոսքը սպասված էր, և վաղուց հասունացել էր մերօրյա թատրոնի հարցերի շուրջ հավաքվելու անհրաժեշտությունը: Այս են փաստում նաև նստաշրջանի օրերին և դրանից հետո մամուլի և հեռուստատեսության չդադարող արձագանքները՝ հեռուստա և ռադիո ռեպոր-

տաժների, մամուլի բազմաթիվ հրապարարակումների տեսքով (Հանրային հեռուստատեսություն, Հանրային ռադիո, «Նուռ» հեռուստաընկերություն, «Ազգ» շաբաթաթերթ, «Առավոտ» օրաթերթ, «Ռոսլին» կերպարվեստի հանդես և այլն): Բացման արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան երկրի հիմնական գիտական, ստեղծագործական և կրթական կազմակերպությունների ղեկավարները: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն **Աննա Ասատրյանը** կարևորեց արդի թատրոնին նվիրված գիտաժողովի դերը. «Մեր արվեստի բոլոր ճյուղերում կան և՛ խնդիրներ, և՛ ձեռքբերումներ: Անհրաժեշտություն կա համախմբվելու ստեղծագործական միությունների հետ և քննարկելու մեր խնդիրները, նշելու ձեռքբերումները, անդրադառնալու մարտահրավերներին և գտնել լուծման ուղիներ: Այս նստաշրջանն այդ առումով հրաշալի հարթակ է», - ասաց նա:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս **Յուրի Սուվարյանը** նույնպես անհրաժեշտություն համարեց արդի հայ թատրոնի մասին նոր խոսքը. «Ներկայումս շատ բան է փոխվել: Թատրոնը, բացի էսթետիկ հաճելի պահեր պարգևելուց միշտ ունեցել է նաև ասելիք: Հենց ասելիքին է վերաբերում փոփոխությունը՝ ի՞նչ էին փորձում ասել նախկինում, ի՞նչ են փորձում ասել այսօր: Ես կարծում եմ, որ հենց այս խնդիրն է, որ կդառնա նստաշրջանի քննարկման նյութը: Լիահույս եմ, որ գիտական նստաշրջանի արդյունքները նոր շունչ կտան մեր ազգային թատրոնին, մեր թատերական գործիչներին»:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատար **Լիլիթ Արզումանյանը** բարձր գնահատեց գիտական և ուսումնական կազմակերպությունների համագործակցությունը՝ հույս հայտնելով, որ նստաշրջանը կարող է լավ արդյունք տալ շարունակական դառնալ: Արդի թատրոնը

միշտ փնտրտուքների մեջ է եղել, որովհետև փորձել է համընթաց քայլել կյանքի հետ, որոշակի պատասխաններ տալ կյանքի խնդիրներին, լուծումներ գտնել: Ես շնորհակալություն եմ հայտնում նստաշրջանի մասնակիցներին և հաջողություն ցանկանում բոլորին», - ամփոփեց նա:

Վարշավայի համալսարանի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի թատրոնի և դրամայի հետազոտությունների կենտրոնի ղեկավար **Անդրեյ Մոսկվինը** նստաշրջանին մասնակցում էր թե՛ իբրև գիտաժողովի գաղափարի հեղինակ, թե՛ որպես բանախոս: Նա Հայաստան էր ժամանել ոչ միայն մասնակցելու այս նստաշրջանին՝ արդի հայ դրամատուրգիային նվիրված իր բազմակողմանի վերլուծությամբ, այլև Վարշավայում լույս տեսած գիտական հանդեսի շնորհանդեսը հենց Երևանում անցկացնելու մտադրությամբ: Նա նշեց, որ նստաշրջանը Հայաստանի հետ իր առաջին նախաձեռնությունը չէ և վերջինը չի լինելու: Ա. Մոսկվինը նկատեց, որ անհրաժեշտություն կա արձանագրելու, թե ինչ է կատարվում թատերական աշխարհում, գտնելու լուծումներ առաջխաղացման համար և հաջորդ քայլն անել:

Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ **Հակոբ Ղազանչյանն** իր խոսքում ավելացրեց. «Ես կասկած չունեմ, որ այս գիտական նստաշրջանը լուրջ ազդեցություն կթողնի ժամանակակից թատրոնի վրա՝ նկատի ունենալով, որ այն շարունակական է լինելու, հետագայում կարող է լուրջ քննարկումների արդյունք դառնալ և աջակցել արդի թատրոնի զարգացմանը»:

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն **Վարդան Մկրտչյանը** նշեց. «Լիահույս եմ, որ այս նստաշրջանը պետք է տա նոր մտքեր, նոր գաղափարներ, առողջ քննադատություն: Այսօր մենք ունենք շատ ավելի մեծ հնարավորություններ աշխարհի հետ հարաբերվելու: Մեզ մնում է առավել ամրացնել մեր մոտեցումները»: Նա իր խոսքն ավարտեց՝ շնորհավորելով և շնորհակալություն հայտնելով նստաշրջանի կազմակերպիչներին:

Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն **Կարեն Դուրգարյանը,** ողջունելով գիտական նստաշրջանի կազմակերպիչներին և մասնակիցներին՝ նշեց. «Մենք պետք է տեսնենք խնդիրները, շատ խոսենք մեր խնդիրներից, իսկ երբ խնդիրը տեսանելի է, պետք է անմիջապես լուծում տալ»: Նա նշեց օպերային թատրոնի առջև ծառացած խնդիրներից մի քանիսը, որոնք վերաբերվում էին թե՛ ներքին կառավարման խոհանոցին, թե՛ հատկապես դիրիժորների սերնդափոխության հարցերին: Կ. Դուրգարյանը վստահ է, որ պետք է նախապատրաստել թատրոն եկող հաջորդ սերնդին:

Նստաշրջանի առաջին՝ «Արդի հայ թատրոնը» (համանախագահներ՝ Մանե Մկրտչյան, Անուշ Ասլիբեկյան) նիստում առաջինը ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոս, արվեստագիտության թեկնածու, դոցենտ **Անուշ Ասլիբեկյանի** ««ԳՈՅ» թատրոն-լաբորատորիա. «Ազատ թատրոն» մոդելով առաջին թատրոնը Հայաստանում» զեկուցումն էր: Հայ ժողովրդի նորագույն պատմության ամենածանր տարեթվերից մեկին՝ 1988 թվականին, Երևանում բացվեց նոր

թատրոն, որը հաստատվեց Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի ձեղնահարկում: «Գոյ» անվանումով (գոյություն, լինելիություն, կեցություն) այս՝ Հայաստանում իր տեսակի մեջ եզակի թատրոնը, թե՛ թատրոն-լաբորատորիա էր, թե՛ ինքնակառավարման մեթոդ կիրառող առաջին թատրոնը: Թատրոնի հիմնադիր չորս երիտասարդ բեմադրիչները՝ Արմեն Մազմանյանը, Արսեն Աբրահամյանը, Սամսոն Ստեփանյանը և Արթուր Սահակյանը վճռել էին Հայաստան ներմուծել խորհրդային երկաթյա վարագույրի պատճառով հայ հանդիսատեսին չհասած համաշխարհային փիլիսոփայական, թատերական ավանգարդ պրոցեսները: Ներկայացնելով թատրոնի ստեղծման պատմությունը, անցած ուղին և ձեռքբերումները, Ա. Ասլիբեկյանն ամփոփեց. «Թատրոնը 2010 թ.-ին պետական կարգավիճակ է ստանում: Այսօր թատրոնը 34 տարեկան է և համալրված դերասանական նոր սերունդներով, նոր խաղացանկով՝ շարունակում է ստեղծագործել՝ հավատարիմ մնալով իր նախնական գաղափարական ծրագրին»:

Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Գրիգոր Օրդոյանը** «Արդի թատրոնի դիսկուրսը» բանախոսության մեջ նկատեց, որ արդի թատրոնի խնդիրն է ստեղծել առավելագույնս հավաստի իրականություն, որը հանդիսատեսին թույլ է տալիս ոչ միայն ազատ ու անկաշկանդ հետևել գործող անձանց արարքներին և իրադարձություններին, այլև գիտակցել այն նոր հանգամանքները, որոնք թելադրում են դրսևորել համապատասխան վարքագիծ: «Հայտնվելով այդ նոր իրավիճակում՝ նա արդեն ոչ թե առաջվա պես, դահլիճից հերթական ներկայացում է դիտում, այլ ժամանակավորապես մուտք է գործում մի նոր «բնակավայր», որտեղ նրան գուցե չէին էլ սպասում: Այստեղից էլ՝ թատրոնի բոլոր դիսկուրսիվ որոնումները միտված են կառուցելու այնպիսի միջավայր, որտեղ հանդիսատեսը մի քանի ժամվա ընթացքում անբռնազբոս կապրի միանգամայն նոր կյանքով, ասել է թե՝ նրա համար կյանքն արդեն այստեղ է, խաղի միջավայրում, այլ ոչ թե այնտեղ, դահլիճում, որտեղից ավանդաբար դիտել է հորինված դրամատիկական ներկայացումներ», - եզրակացրեց բանախոսը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Հայաստանի թատերական գործիչների միության վարչության անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր **Աննա Ասատրյանը** «Ռեժիսոր Երվանդ Ղազանչյանը և Տիգրան Չուխաճյանի կոմիկական օպերաները» զեկուցման մեջ բացահայտեց այն մեծ դերը, որն ունեցել է Երևանի Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ, Հայաստանի պետական և ՀՀ Նախագահի մրցանակների դափնեկիր, տաղանդավոր ռեժիսոր Երվանդ Ղազանչյանը Տիգրան Չուխաճյանի կոմիկական օպերաների բեմական ճակատագրում: Նրա բեմադրությամբ 2014 թվականի հունվարի 25-ին, տևական ընդմիջումից հետո հայրենիք կրկին վերադարձավ Տիգրան Չուխաճյանի «Կարինե» օպերետը՝ հայացված «Լեբլեբիջի Հոր-հոր աղա» կոմիկական օպերան: Այնուհետև Ղազանչյանը ձեռնամուխ եղավ Տ. Չուխաճյանի առաջին կոմիկական օպերայի՝

«Արիֆի» բեմադրությանը, որը տեղի չունեցավ, քանի որ 2019 թ. հուլիսի 30-ին կյանքից հեռացավ Երվանդ Ղազանչյանը՝ իր հետ գերեզման տանելով Հայաստանում «Արիֆի» բեմադրության վերջին հույսը…

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Մանե Մկրտչյանը** «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի կրթական ծրագիրը» բանախոսության մեջ հաշվի առնելով այն հանգամանքը, թե ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգերում ինչ անփոխարինելի դեր ունի գեղարվեստական կրթությունը, և կրթական ծրագրերն արդեն տևական ժամանակ է, ինչ դարձել են ժամանակակից մշակութային հաստատությունների գործունեության անբաժան մասը, նշեց, որ ներկայումս աշխարհի առաջատար թանգարանները, գրադարաններն ու թատրոնները ծրագրեր են մշակում ամենատարբեր թիրախային խմբերի համար՝ հաշվի առնելով տարիքային, սեռային և մի շարք այլ առանձնահատկություններ: «Եթե հայաստանյան թանգարանների պարագայում վերջին տասը տարիների ընթացքում կրթական բազմատեսակ ծրագրեր են իրականացվել, - նշեց բանախոսը, - ապա պատկերը լիովին այլ է թատերական աշխարհում: Այս առումով Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի «Դասարան+Դասական» կրթական ծրագիրը կարող է աննախադեպ համարվել»: Մ. Մկրտչյանը ներկայացրեց 2019-ին մեկնարկած Ծրագիրը, բնութագրեց դրա փուլերը և բացահայտեց զարգացման միտումները: «Եթե առաջին փուլը նպատակ ուներ մասնակիցներին ընդհանուր առմամբ ծանոթացնել թատերարվեստի ոլորտին, իսկ կորոնավիրուսային համավարակի ժամանակ առցանց տարբերակը լուսաբանում էր Հայաստանի թատերական կյանքը, ապա 2021-2022 թթ. ծրագրի կիզակետում էր դերասանական արվեստը», - նկատեց Մանե Մկրտչյանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր **Նազենիկ Սարգսյանը** «Աշոտ Ասատուրյանի «Սիմֆոնիկ պարերը» զեկուցման մեջ նշեց, որ 2022-ին լրացավ հայ ականավոր բալետմայստեր Աշոտ Ասատուրյանի ծննդյան 85-ամյա հոբելյանը: «Թեև 23 տարի է, ինչ նա մեզ հետ չէ, սակայն դիտելով նրա ստեղծած բալետների տեսանյութերը և ձեռագրերը, որտեղ նա գրառել է իր բեմադրական հայեցակարգը, ակնհայտ է դառնում, թե որքան արդիական են նրա ստեղծագործական մտածելակերպը, երաժշտական պարտիտուրի խորեոգրաֆիկ ընթերցման սկզբունքները, սցենարների բազմանշանակ ընթերցումը նույնիսկ մեր օրերում: Նա անդրադարձավ հենց այդ առանձնահատկություններին՝ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում 2022 թ. հունիսին ներկայացված Աշոտ Ասատուրյանի վերջին բեմադրության (1997 թ., Խարկով)՝ Սերգեյ Ռախմանինովի համանուն երկի երաժշտությամբ ստեղծված «Սիմֆոնիկ պարերը» բալետի օրինակով:

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի թատերական բաժնի վարիչ, ԵԹԿՊԻ-ի դասախոս, արվեստագիտության թեկնածու **Նաիրա Շահվալադյանը** «Խաղ հանդիսատեսի հետ» բանախոսության մեջ անդրադարձավ սայթ-սպեցիֆիկ (site-specific) ժանրի որոշ ստեղծագործողնե-

րի, ովքեր փորձելով սրել հանդիսատեսի զգացմունքները, նրանց դարձնում են ներկայացումներին մասնակից: Այս դեպքում՝ բանախոսի դիտարկմամբ՝ գեղարվեստական ստեղծագործությունից վայելք ապրելու փոխարեն, սուբյեկտը բախվում է իրական ապրումների մի տեղում, որտեղ կյանքը իրական չէ: «Մարդիկ, վերը նշված դեպքերում, ապրում են հոգեկան հույզեր՝ վախն ու սարսափը, անհանգստությունը իրական են, - նշեց Ն. Շահվալադյանը, - սա գեղարվեստական հույզի դուրս մղումն է թատրոնից: Հանդիսատեսի ներկայությունը՝ որպես դիտողի, կարևոր է թատրոնում: Նրա ներկայությունից դերասանի մոտ մեծանում է իր ստեղծածի հանդեպ բավականության զգացումը: Հանդիսատեսը թատրոնում հուզական երկխոսության մեջ է մտնում դերասանի հետ, կարեկցանք է ապրում, բայց դա նույնը չէ, ինչ իրական կյանքում ապրածը: Գեղարվեստականից ստացած հաճույքը տարբերվում է նաև նրանով, որ դիտողը շփվում է մի կյանքի հետ, տեսնում մի իրավիճակ, որտեղ ինքը չէ, այն ուրիշի մասին է: Դերասանի ստեղծած պատրանքը ամբողջանում է հանդիսատեսի հոգում, նրա երևակայության շնորհիվ: Դերասանը պետք է ցուցադրի, իսկ հանդիսատեսը պետք է տեսնի, որ «խաղը» կայանա»:

Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ռուս և համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու **Սոնա Մարգարյանը,** ով նաև Սլավոնական համալսարանում արդեն շուրջ 20 տարի գործող «ԲԷՄ» ուսանողական թատրոնի հիմնադիր-ղեկավարն է, իր բանախոսությամբ բացահայտեց ներկաների համար բոլորովին նոր իրականություն: Նա նշեց, որ թատրոնը հայաստանյան և միջազգային փառատոների բազմակի դափնեկիր է, մի քանի տարի անընդմեջ հաղթել է Պուշկինյան միջազգային «Դարի հետ համընթաց» արվեստի փառատոնում, Եկատերինբուրգի «Թատերական գարուն UPI-2012» XXII միջազգային ուսանողական փառատոնում: Սոնա Մարգարյանը «Ուսանողական թատրոնը որպես ստեղծագործական արհեստանոց և ինքնադրսևորման միջոց» զեկուցման մեջ ներկայացրեց թատրոնի ստեղծման պատմությունը, անցած ուղին, և ձեռքբերումները, անդրադարձավ խաղացանկին, ուր սկզբում ընդգրկված էին ռուս և արտասահմանյան դասական գրականության ներկայացուցիչների ստեղծագործություններ, հետագայում բեմում հայտնվեց ժամանակակից հայկական և համաշխարհային դրամատուրգիան: Տարբեր ժամանակներում բեմադրվել են Գրիբոյեդովի, Լերմոնտովի, Գոգոլի, Տուրգենևի, Չեխովի, Բուլգակովի, Պուշկինի, Ժան Անուի, Ֆիլատովի, Վասիլևի, Շվարցի, Իոնեսկոյի և շատ այլ հեղինակների ստեղծագործությունները: Թատրոնի ստեղծագործական գործունեության վերլուծության արդյունքում Սոնա Մարգարյանը եզրակացրեց, որ «արդեն ձևավորված հանդիսատեսի լսարանի պահպանումը և նորի ակտիվ ձևավորումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե խաղացանկը ներառի տարբեր ժանրեր, որոնք կհետաքրքրեն տարբեր տարիքի և նախասիրությունների անձանց»:

Թատրոնի գեղարվեստական ղեկավարը գիտաժողովի կազմակերպիչներին նվիրեց իր հեղինակած «Да будет театр» (Ереван, РАУ, 2017, 288 с.) ծավալուն և պատկերազարդ գիրքը, որը նվիրված է համալսարանի 20-ամյակին:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու **Լիլիթ Արտեմյանի** «Մարտին Վարդազարյանի երաժշտությունը թատերական ներկայացումների համար» զեկուցման նպատակն էր քննության առնել և առաջին անգամ համակողմանի ներկայացնել հայ ժամանակակից կոմպոզիտորական դպրոցի վաստակաշատ ներկայացուցիչներից մեկի՝ կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր, երաժշտական-հասարակական գործիչ, ՀՀ ժողովրդական արտիստ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Մարտին Վարդազարյանի ներդրումը թատերական ներկայացումների համար երաժշտության ստեղծման ասպարեզում: Կոմպոզիտորը երաժշտություն է գրել շուրջ 150 թատերական ներկայացումների համար՝ այդ թվում՝ «Մակբեթ», «Լիր արքա» (ըստ Ու. Շեքսպիրի), «Քաջ Նազար» (ըստ Դ. Դեմիրճյանի), «Մեծապատիվ մուրացկաններ» (ըստ Հ. Պարոնյանի) և այլն: Բանախոսը ներկայացրեց վերջին 33 տարիների ընթացքում Վարդազարյանի ներդրումն այդ ասպարեզում:

Նստաշրջանի աշխատանքների առաջին օրը եզրափակվեց Վահան Արծրունու համերգով՝ մասնակցությամբ «ՎԵԼՎԵՏ» լարային քառյակի և Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ֆլեյտահար Նարեկ Ավագյանի:

Հոկտեմբերի 7-ին, Նստաշրջանի երկրորդ՝ «Արդի հայ դրաման» նիստում (նիստի համանախագահներ՝ Կարինե Խոդիկյան, Ջերալդ Փափազյան), Վարշավայի համալսարանի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի թատրոնի և դրամայի հետազոտությունների կենտրոնի ղեկավար, բանասիրական գիտությունների դոկտոր **Անդրեյ Մոսկվինը** (Լեհաստան, Վարշավա) «Ժամանակակից հայ դրամայի հերոսը» բանախոսության մեջ նշեց, որ դասական դրամատուրգիայում հաճախ առկա է հիմնականում դրական ընդգծված հատկանիշներով օժտված հերոսը: Սակայն 21-րդ դարի սկզբին «Նոր դրաման» փոխեց հերոսի հանդեպ իր մոտեցումները. սա հիմնականում շրջապատող աշխարհին հակադրվող անձն է, ում կյանքը լի է անսպասելի իրադարձություններով և հակասություններով: Այս համատեքստում բանախոսը բացահայտեց, թե ինչպիսի հերոսի է նախընտրում ժամանակակից հայ դրամատուրգիան՝ հենվելով «Արդի հայ դրամա» (Nowy Dramat Ormianski, red. A Moskwin, Warszawa, 2019, 165 s.) անթոլոգիայի վրա՝ միաժամանակ ընդգծելով պիեսների բազմաժանրությունը և բարձր գնահատականի արժանացնելով հայ դրամատուրգներին: «Վերստին թերթելով անթոլոգիան՝ մեկ անգամ ևս համոզվեցի, որ այս հատորը ներկայացնում է բարձր գեղարվեստականությամբ պիեսներ և կարող է թարգմանվել աշխարհի բոլոր լեզուներով և ամենուրեք ներկայանալի լինել», - իր զեկուցումն ամփոփեց Ա. Մոսկվինը:

«Թատրոն» ամսագրի խմբագիր, թատերագետ **Ալլա Շենդերովան** (Ռուսաստան, Մոսկվա) «Հետխորհրդային հայ թատրոնը. հայացք Մոսկվայից և Բեռլինից» զեկուցման մեջ փորձեց բնութագրել արդի հայ թատրոնի բնորոշ առանձնահատկությունները: Լինելով Մոսկովյան հանրահայտ «Չեխովյան փառատոնի» գլխավոր փորձագետ և հաճախ դիտելով հետխորհրդային երկրների նոր ներկայացումները՝ թատերագետն այս համատեքստում բարձր գնահատեց

հայ երիտասարդ ռեժիսորների աշխատանքները՝ առանձնացնելով նրանց պրոֆեսիոնալիզմը, երևակայությունը, ընտրած նյութը, ինչպես նաև անդրադարձավ հայ դերասանուհիների տեմպերամենտին, վառ տաղանդին և ընդգծված անհատականություններին: Համակողմանիորեն վերլուծելով վերջին տարիների բեմադրությունները՝ Շենդերովան նկատեց, որ ստեղծագործողների մեջ աչքի են ընկնում հատկապես կանայք, որ նոր գեղագիտություն ու թարմ մտածողություն են բերում արդի հայ թատրոն:

«Սաթէ-Աթոը» ֆրանսիական թատերական միության ռեժիսոր, բանասիրական գիտությունների թեկնածու **Սաթե Խաչատրյանը** (Ֆրանսիա, Լիոն) «Ինտելեկտի անզորության դրաման Գուրգեն Խանջյանի պիեսներում» զեկուցման մեջ նկատեց, որ ժամանակակից հայ դրամատուրգիայում գործող անձի և գործողության խզման հետևանքով մարդը որպես կերպար զրկվում է խառնվածքից և դասական կերպարին հատուկ մարդկային նկարագրից: Ու քանի որ կերպարի անզորության դրաման առավել ցայտուն դրսևորվում է Գրիգոր Խանջյանի պիեսներում, որտեղ մարդու կերպարի ընդգծված հատկանիշն արտաքին աշխարհի հանդեպ ծայրահեղ անտարբերության դրսևորումն է, բանախոսը նկատեց, որ մարդը նրա պիեսներում ոչ այնքան գործող, որքան պասիվ, հայեցող կերպար է, ոչ այնքան կյանքին մասնակից, որքան դիտորդ է:

ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դրամատուրգ **Էլֆիք Զոհրաբյանը** «Արդի հայ դրամատուրգիայի ժանրային ուղղությունները (2010-2022 թթ.)» զեկուցման մեջ արդի հայ դրամատուրգիայի գրանյութի հիմքով առանձնացրեց ժանրային հիմնական դրսևորումները: Հատուկ ուշադրություն դարձնելով ժանրային և ենթաժանրային մակարդակների հարաբերություններին և անդրադառնալով արդի հայ դրամատուրգիայի տարբեր սերունդների ներկայացուցիչներին (Աղասի Այվազյան, Պերճ Զեյթունցյան, Ալեքսանդր Թոփչյան, Կարինե Խոդիկյան, Գուրգեն Խանջյան, Նորայր Ադալյան, Սամվել Կոսյան, Սամվել Խալաթյան, Անահիտ Թոփչյան, Գևորգ Սարգսյան, Անահիտ Աղասարյան, Աննա Պետրոսյան, Ռուբեն Մարուխյան, Արա Երնջակյան, Դավիթ Մուրադյան, Ռաֆայել Նահապետյան, Հայկ Հակոբյան, Խաչիկ Չալիկյան, Հրաչ Բեգլարյան, Անահիտ Արփեն, Արթուր Էդար, Ալեքսանդր Հովսեփյան, Գագիկ Կարապետյան, Աստղիկ Սիմոնյան, Հովհաննես Թեքգյոզյան, Անուշ Ասլիբեկյան, Դավիթ Խաչիյան և այլք)՝ բանախոսն արձանագրեց ժանրային ու ենթաժանրային տեղաշարժերն այս համեմատաբար կարճ պարբերափուլի ընթացքում:

Դերասան-բեմադրիչ **Ջերալդ Փափազյանի** (Ֆրանսիա, Փարիզ)՝ «Հայ հեղինակները արդի միջազգային բեմ բարձրացնելու անհրաժեշտությունը» զեկուցումը նվիրված էր թատրոնին ու օպերային: Բանախոսն առաջ քաշեց համաշխարհային թատրոններում օտար արտիստների կատարմամբ հայկական պիեսների և օպերաների ներկայացման անհրաժեշտության հարցը: «Մեզ անհրաժեշտ են թարգմանություններ, - նշեց Ջ. Փափազյանը, - դժվարությունը կարողանալ համոզելն է համաշխարհային թատրոնի տնօրեններին, որ իրենց հանրությանը անհայտ հեղինակների գործեր արտադրեն ու բեմադրեն: Վերջին մի քանի

տասնամյակների ընթացքում ստեղծվել են որոշ «ոչ հայկական» բեմադրություններ, ինչպես, օրինակ, Միչիգանի օպերային թատրոնի կողմից արտադրված «Անուշ» օպերան, որը բեմադրվել է ամբողջապես ամերիկյան երգիչների կազմի կողմից: Բայց այս իրադարձությունները սակավ են»: Իր զեկուցման մեջ Ջ. Փափազյանը փորձեց պատասխանել հետևյալ առանցքային հարցերին՝ ինչպե՞ս խթանել այդ գաղափարը և հաճախակի մնալ միջազգային բեմերում, ի՞նչ հնարավորություններ և դժվարություններ կան, ո՞րն է այս ռազմավարության կարևորությունը: Ինչո՞ւ են հայ թատրոնը և օպերան, ի տարբերություն հայկական դասական և ժողովրդական երաժշտություն, որոնք որոշ չափով ծանոթ են աշխարհին, համեմատաբար անհայտ են: Այս բարդ խնդրի լուծման ճանապարհին բանախոսը կարևորեց դրանց թարգմանության հարցը, որի միջոցով հնարավոր կլինի հաղթահարել լեզվական խոչընդոտները և աշխարհին մատչելի դարձնել մեր թատերական (ներառյալ՝ օպերային) ժառանգությանը:

ԵԹԿՊԻ Վանաձորի մասնաճյուղի դասախոս **Կարեն Մանուչարյանը՝** ««Տեքստը տեքստում» կառույցի դրսևորումները Գուրգեն Խանջյանի դրամատուրգիայում. «բեմ բեմի մեջ», «էկրանը բեմում»» բանախոսության մեջ քննության առավ միջտեքստայնության արտահայտությունները Գ. Խանջյանի դրամատուրգիայում: «Տեքստը տեքստում» կառույցի տարբեր դրսևորումներից Կ. Մանուչարյանն առանձնացրել էր երկուսը («բեմ բեմի մեջ», «էկրանը բեմում»), որոնք նկատվում են Գ. Խանջյանի դրամատուրգիայում: Սրանք այն դեպքերն են, երբ դրամատիկական տեքստի գործողություններն «ընդմիջվում են» մեկ այլ տեքստով («ներդիր» - բեմ կամ «ներդիր» - էկրան): Վերջինս դրսևորվում է իբրև հստակորեն ընդգծված ինտերտեքստ՝ ձևավորելով առնվազն երկմակարդակ կառույց: Ներքին շրջանակով միմյանցից պայմանականորեն զատված այդ երկու տեքստերը պիեսի ավարտափուլում որոշակիորեն նույնականանում են:

Զեկուցումների ընթացքում ցուցադրվեցին տեսանյութեր և լուսանկարներ, որոնք ավելի ամբողջական դարձրեցին ներկայացվող նյութերի բովանդակությունները:

Հոկտեմբերի 7-ին, նստաշրջանի շրջանակներում տեղի ունեցավ Վարշավայի համալսարանի հրատարակած **«Կենտրոնական և արևելյան Եվրոպայի թատերագիտություն» («Studia Teatralne Europy rodkowo-Wschodniej»)** (խմբագիր՝ Անդրեյ Մոսկվին, 2021, N 2, Վարշավա) եռալեզու գիտական ամսագրի շնորհանդեսը՝ համագործակցությամբ «Հայֆեստ» կատարողական արվեստների միջազգային փառատոնի: Համարի կենտրոնում հայ թատրոնն է, իսկ շապիկին Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի լուսանկարն է և «FOKUS: ARMENIA» գրությունը: 530 էջ ընդգրկող համարում հանդես են եկել 23 երկրի 34 հեղինակներ: Հայաստանից առկա են տասից ավելի գիտական և ճանաչողական բնույթի հոդվածներ՝ անգլերեն և ռուսերեն, որոնք վերաբերում են ոչ միայն հայ թատրոնին, այլև կինոյին, բալետին, թատերագրությանը, շեքսպիրագիտությանը: Հանդեսի հայկական թողարկման պատասխանատուն Անուշ Ասլիբեկյանն է:

Գիտական հրապարակումներով հանդես են եկել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող ***Արծվի Բախչինյանը***՝ ներկայացնելով «Հայ թատրոնի և կինոյի համառոտ պատմություն» և «Հայաստանի սերն առ Շեքսպիր» հոդվածները, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի պրոռեկտոր ***Նարինե Սարգսյանը***՝ «Խորհրդահայ ռեժիսուրայի ձեւավորումը (1920-ականներ)» հոդվածով, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող ***Սառա Նալբանդյանը***՝ «Ազատությունից դեպի համակարգ. 20-րդ դարի առաջին կեսի հայկական ուղղությունը», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող Անուշ Ասլիբեկյանը՝ «Կորուսյալ երկրի հիշողությունները Վիլյամ Սարոյանի հայկական թեմաներով դրամաներում», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող ***Նազենիկ Սարգսյանը***՝ «Շեքսպիրը հայ պարուսույցների ստեղծագործություններում», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող ***Անահիտ Բեքարյանը***՝ «ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի Ռ. Զարյանի անվան շեքսպիրյան գրադարանը» հոդվածներով:

Հանդեսի ոչ գիտական հատվածում ներկայացված են ընդհանուր տեղեկություններ արդի հայ թատրոնի և Հայաստանյան միջազգային թատերական փառատոների մասին: Զետեղված է հայաստանյան թատրոնների ամբողջական ցանկը, ***Անդրեյ Մոսկվինի*** «Արթուր Ղուկասյան. «Հայֆեստը» Հայաստանում դրոշակակիր փառատոն է» հարցազրույցը փառատոնի գեղարվեստական ղեկավար Արթուր Ղուկասյանի հետ, «Երեւանի միջազգային շեքսպիրյան թատերական փառատոնը» եւ «Արմմոնո միջազգային թատերական փառատոնը» նյութերը, ***Կարինե Խոդիկյանի*** «Հայաստանի երրորդ հանրապետության թատերագրությունը» հոդվածը, արդի հայ բեմի շեքսպիրյան բեմադրությունների մասին է ***Սոնա Մելոյանի*** «SHAKEspeareSHAKE՝ հայկական հող եւ ճակատագրեր» հոդվածը, իսկ ***Ռոջեր Սմիթի*** նյութը պատմում է Երևանյան «Summeet» ժամանակակից պարի առաջին միջազգային փառատոնի մասին:

Նշենք, որ հանդեսում նյութերն ուղեկցվում են լուսանկարներով, ներկայացված են ոչ միայն յուրաքանչյուր հոդվածի բովանդակությանը համապատասխան կադրեր, այլև դրվագներ հայաստանյան տարբեր թատրոնների ժամանակակից ներկայացումներից:

«Արդի հայ թատրոն. նոր միտումներ և հիմնախնդիրներ (1990-2022)» միջազգային գիտական նստաշրջանը և գիտական հանդեսը պրոֆեսոր Անդրեյ Մոսկվինի առաջին համագործակցությունը չէ հայ թատրոնի մասնագետների հետ: 2019 թվականին նրա նախաձեռնությամբ լեհերեն թարգմանությամբ լույս է տեսել «Արդի հայ դրաման» հատորը, որի կազմողն ու խմբագիրն էր, նաև երկու նախաբաններից մեկի հեղինակը: Առաջիկայում նախատեսվում է «Արդի հայ դրամա» անթոլոգիայի երկրորդ հատորի լույսընծայումը Վարշավայում:

Ա. Մոսկվինը նպատակ ունի նաև Հայաստան վերադառնալու ավելի երկար ժամանակով՝ Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնին նվիրված գիրք գրելու մտադրությամբ:

Նստաշրջանի ավարտից հետո տեղի ունեցավ Արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանի և պրոֆեսոր Մոսկվինի հանդիպումը ՀՀ ԳԱԱ ար-

վեստի ինստիտուտում, որի ընթացքում նախանշվեցին համագործակցության հետագա պլաններ: Աննա Ասատրյանն առաջարկեց Ա. Մոսկվինին դառնալ «Արվեստագիտական հանդեսի» (Երևան) խմբագրական խորհրդի անդամ. վերջինս առաջարկը մեծ սիրով ընդունեց, իսկ առաջիկայում կկնքվի պայմանագիր «Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի թատերագիտություն» (Վարշավա) և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի «Արվեստագիտական հանդեսի» միջև, ինչի շնորհիվ հայ ընթերցողը հնարավորություն կունենա ծանոթանալու լեհ թատերագետների գիտական հետազոտություններին, իսկ հայ արվեստաբանական հոդվածները կներկայացվեն լեհական հանդեսում՝ ավելի հասանելի դառնալով կենտրոնական և արևելյան Եվրոպայի երկրների հետազոտողների և ընթերցողների լայն շրջանակի համար: Քննարկվեցին նաև գիտական և կրթական այլ նախագծեր՝ ապագայում երկու հաստատությունների համագործակցության նպատակով:

Այսպիսով՝ արդի հայ թատրոնին և դրամատուրգիային նվիրված առաջին գիտական նստաշրջանը կարևոր քայլ էր անկախության շրջանի հայ թատրոնին հետհայացք նետելու, վերլուծելու, քննելու, գնահատելու և նոր միտումները մատնանշելու տեսանկյունից: Նստաշրջանը համախմբեց թատերագետների, երաժշտագետների, ավեստաբանների, գրականագետների ու լեզվաբանների, ինչպես նաև դրամատուրգների ու բեմադրիչների՝ Հայաստանից և արտերկրից: Մի շարք արժեքավոր բանախոսությունների մեջ հատկապես կարևոր էր արտերկրի հետազոտողների վերլուծական հայացքը հայ թատրոնին և դրամատուրգիային՝ ժամանակակից հայ թատրոնի տեղն ու դերը համաշխարհային ժամանակակից թատերարվեստի համատեքստում ըմբռնելու տեսանկյունից: Միջազգային գիտական նստաշրջանի հանդեպ մեծ հետաքրքրությունը փաստեց, որ վաղուց հասունացել էր և մասնագետների ու հանրության կողմից սպասված էր արդի թատրոնի թեմաների շուրջ դիսկուրս ձևավորելու պահանջը: Սա Վարշավայի համալսարանի, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և ԵԹԿՊԻ-ի առաջին համագործակցությունն էր, որ բարձր գնահատեցին իրենց խոսքում թե՛ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն Աննա Ասատրյանը, թե՛ ԵԹԿՊԻ-ի ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Արզումանյանը, թե՛ Արևելյան Եվրոպայի թատրոնի և դրամայի հետազոտությունների կենտրոնի ղեկավար Անդրեյ Մոսկվինը, որոնք հույս հայտնեցին, որ նստաշրջանը կդառնա ամենամյա: Նախանշվեցին նոր թեմաներ՝ հետագա հետազոտությունների համար, ինչպես նաև՝ հետագա համագործակցության հեռանկարներ:

Իսկ առաջիկայում Վարշավայում անգլերեն լեզվով կհրատարակվի «Արդի հայ թատրոն. նոր միտումներ և հիմնախնդիրներ (1990-2022)» միջազգային գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածուն:

Անուշ ԱՍԼԻԲԵԿՅԱՆ
արվեստագիտության թեկնածու, դոցենտ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի ավագ գիտաշխատող
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոս